ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2011թ. թիվ 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 95-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 97-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի <<2010 թվականի ՀՀ պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով /խումբ, ենթախումբ, ծրագիր 070605/ ՀՀ Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին <<Տարեմուտի տոնական միջոցառումներ>> միջոցառման իրականացման համար գումար տրամադրելու մասին>> թիվ 95-Ա որոշման նախաբանի <<2010թ.>> բառերից առաջ ավելացնել. <<Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով՝>> բառերը:

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի թիվ 1 <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Մարիետա Վազգենի Ազատյանի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին>> թիվ 97-Ա որոշման նախաբանից հանել <<Հիմք>> բառը և <<ընդունելով>> բառից առաջ ավելացնել. << Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք>> բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

14 հունվարի 2011թ.
ք. Իջևան